129

1. Զի անցավոր պանդուխտ եմ ես,
Ինչո՞ւ մեղաց քնով նիրհեմ:
Միայն Փրկիչ Տերը սիրեմ,
Զի անցավոր պանդուխտ եմ ես:

2. Պետք չէ խաբվել այս աշխարհեն,
Որ չի դառնա ետքը նորեն,
Կուզեմ երկնից արքայություն,
Զի անցավոր պանդուխտ եմ ես:

3. Ոսկի, արծաթ, հարստություն՝
Չեն տա մարդուն հանգստություն,
Կուզեմ թռչել արքայություն,
Զի անցավոր պանդուխտ եմ ես:

4. Օր մը կյանքս կվերջանա,
Տեսածներս կոչնչանան,
Մարմնիս ուժը կչքանա,
Զի անցավոր պանդուխտ եմ ես:

5. Ամպերի մեջ Դու կանգնել ես,
Թևերդ լայն բաց արել ես,
Ամբողջ աշխարհին կանչել ես,
Զի անցավոր պանդուխտ եմ ես:

6. Քո սուրբ արյունը թափել ես,
Մեղաց մարդկանց Դու գնել ես,
Ողջակեզներէն զզվել ես,
Մեղա եմ Քեզ, խաչյա՛լ Հիսուս:

7. Ես չեմ ուզում փառք, մեծություն
Կամ աշխարհի իշխանություն,
Ծնորհք կուզեմ երկնի Հորից,
Զի անցավոր պանդուխտ եմ ես:

8. Անցավոր են բոլոր աշխարհ,
Զի ունայն է ունայն աշխարհ,
Ես էլ՝ Փրկչիս հոտին մի գառ,
Զի անցավոր պանդուխտ եմ ես: